ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐՎԱՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄՈՏ

«Զրաանց զոր ես խօսեցայ
ընդ ձեզ՝ հոգի է եւ կեանք»:
/ՀՈՎՀ. Զ 64/

Ապրիլի 10-ը առավել հիշարժան և ոգևորիչ էր Մայր Աթոռիս միաբանության և սարկավագների համար, քանզի օրվա տոնականությունը, շաղախված հերթական իմաստալից խրատ-խորհրդի մոտալուտ ակնկալությանը, ամենքին դարձրել էր առավել անհամբեր:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետը նրանց ընդունեց հայրական սիրով ու ջերմ ժպիտով: Միաբանության անունից Նորին Սրբությանը գահակալության առիթով շնորհավորանքի խոսք ասաց «Էջմիածին» ամսագրի գլխավոր խմբագիր գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Արիստակեսյանը: Շեշտելով օրվա կարևորությունը և Նորին Սուրբ Օծությանը մաղթելով արևշատություն՝ սրբազան հայրն ավելացրեց, որ Ս. Էջմիածնի միաբանության յուրաքանչյուր անդամ իր հիշողության ծալքերում խորին երկյուղածությամբ է պահպանում մեկ տարի առաջ նույն օրերին տեսածն ու ապրածը, որն այսօր պատմություն է դարձել: Պատմություն, որը, սակայն, բոլոր ժամանակներում էլ ցանկալի ու դաստիարակիչ ավանդներ, վեհ դաղափարներ և անմեկնելի խորհուրդներ է պարագրում:

Հավարտ սրբազան հոր երախտիքի խոսքի, Վեհափառին միաբանության անունից հանձնվեց գեղեցիկ ծաղկեփունջ:

Ապա խոսեց Ամենայն Հայոց Հայրապետը, ի մասնավորի հիշելով մեր նախնյաց սրբասուրբ և խորախորհուրդ խրատները, որոնց բարեխիղճ հետևողը մշտապես կքայլի դեպի Աստվածային սերն ու հավիտենական կյանքը տանող ուղով: Որպես բարի ու քաջ հովիվ, ցանկություն հայտնեց իր հոտի յուրաքանչյուր անդամին մշտապես տեսնել նույն տոնական տրամադրությամբ, որով իրեն են ներկայանում: Նաև հիշեցրեց, որ իրեն միայն այն ժամանակ երջանիկ ու նվիրված հովվապետ կհամարի, երբ ներկաներից յուրաքանչյուրն իր կյանքի մշտավառ կանթեղը դարձնի Աստծու շունչը ամփոփող Մատյանը, Հարանց վարքի սրբալույս էջերը, ինչպես նաև նախնյաց իմաստալից ու ոգեշունչ պատմությունները:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը շնորհակալություն հայտնեց գեղեցիկ նախաձեռնության համար:

Հանդիպումն ավարտվեց «Էջ Միածին ի Հօրէ» շարականի և «Հայրապետական մաղթերգ»-ի երգեցողությամբ: